

1.2.3. Ձկնորսություն, ձկնաբուծություն

Հանրապետությունում 2008թ. հունվար-հունիսին, համաձայն ձկնորսությամբ և ձկնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների ներկայացրած պետական վիճակագրական հաշվետվությունների և ֆիզիկական անձանց տվյալների¹, իրականացվել է 5387.2 մլն. դրամի ձկան որս, որը 2007թ. համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշի մակարդակը գերազանցել է 35.4 %-ով (համադրելի գներով):

Ձկնորսության և ձկնաբուծության ծավալները հանրապետությունում

	2008թ. հունվար-հունիս, տոննա	2008թ. հունվար-հունիս, մլն. դրամ	2008թ. հունվար-հունիսը 2007թ. հունվար-հունիսի նկատմամբ, %	2008թ. հունիսը մայիսի նկատմամբ, %
Կատարվել է որս ձկնորսության, ձկնաբուծության ոլորտում, ընդամենը	2992.9	5387.2	135.4	176.5
<i>որից`</i> իրացվել է	2992.9	5387.2	135.4	176.5

¹ Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության վարչական ռեգիստրի տվյալների: